Հաստատված է՝
«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի
ազգային համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 2024թ. դեկտեմբերի 19 -ի նիստում
Արձանագրություն թիվ 3
Հոգաբարձուների խորհրդի նախագահ

Ե.Վ. Վարդանյան

ԿԱՐԳ

«ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԵԿՏՈՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն կարգը սահմանում է «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ համալսարան) կառավարչի (այսուհետ՝ ռեկտոր) թափուր պաշտոնի հավակնորդների առաջադրման, բաց մրցույթի անցկացման ընթացակարգերը:

1.2. Սույն կարգը մշակված է «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համալսարանի կանոնադրության հիման վրա:

1.3. Համալսարանի ռեկտորի ընտրությունների կազմակերպման հետ կապված ծախսերը կատարվում են համալսարանի սեփական միջոցների հաշվին:

1.4. Սույն կարգը հաստատում է համալսարանի հոգաբարձուների խորհուրդը:

2. Մրցույթի հիմնական պայմանները

2.1. Համալսարանի ռեկտորի թափուր պաշտոն առաջանալու դեպքում, համալսարանի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ հայտարարվում է բաց մրցույթ:

2.2. Համալսարանի ռեկտորի պաշտոնի բաց մրցույթին մասնակցելու համար թեկնածուն առաջադրվում է ինքնաառաջադրմամբ:

2.3. Համալսարանի ռեկտորի պաշտոնում կարող է ընտրվել Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացին, որն ունի գիտական աստիճան և առնվազն 5 (հինգ) տարվա ակադեմիական և գիտական գործունեության ստաժ:

2.4. Համալսարանի ռեկտորը ընտրվում է բաց մրցույթով՝ համալսարանի հոգաբարձուների խորհրդում, գաղտնի քվեարկությամբ, 5 (հինգ) տարի ժամկետով:

2.5. Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել ռեկտորի պաշտոնում:

2.6. Համալսարանի ռեկտորի ընտրության արդյունքները հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Արդյունքներն անվավեր ճանաչվելու դեպքում, սույն կարգի համաձայն, նշանակվում է ռեկտորի նոր ընտրություն: Եթե նույն թեկնածուն ընտրություններում հավաքում է հոգաբարձուների խորհրդի անդամների ձայների առնվազն 2/3-ը, ապա Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատում է խորհրդի որոշումը:

2.7. Համալսարանի ռեկտոր չի կարող ընտրվել այն անձը՝

ա) ով դատապարտվել է հանցագործություն կատարելու համար և նրա դատվածությունը սահմանված կարգով մարված կամ հանված չէ.

բ) որին օրենքի համաձայն արգելվում է զբաղեցնել ղեկավար պաշտոններ.

գ) ով նախընթաց 3 (երեք) տարվա ընթացքում եղել է սննկացման պատճառով լուծարված և պարտատերերի օրինական պահանջները չբավարարած կազմակերպության ղեկավար:

3. Համալսարանի ռեկտորի թափուր պաշտոնի համար բաց մրցույթ հայտարարելու ընթացակարգը

3.1. Բաց մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը (Հավելված 1) հաստատում է համալսարանի հոգաբարձուների խորհուրդը:

3.2. Բաց մրցույթի անցկացման վայրը, օրը և ժամը որոշում է համալսարանի հոգաբարձուների խորհուրդը:

3.3.Բաց մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակվում է երկու փուլով: Առաջին հայտարարությունը հրապարակվում է մրցույթի անցկացման օրից առնվազն 30 (երեսուն) օր առաջ: Առաջին հայտարարությունը հրապարակվելուց 5 (հինգ) օր հետո հրապարակվում է 2-րդ հայտարարությունը:

3.4.Փաստաթղթերի ներկայացման վայրի, աշխատանքային օրերի և ժամերի մասին տեղեկատվությունը ներառվում է համալսարանի ռեկտորի թափուր պաշտոնի համար բաց մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունում:

3.1 Բաց մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակվում է հայերենով՝

ա) համալսարանի nuaca.am կայքի՝ հայտարարություններ բաժնում,

բ) առնվազն 3 (երեք) զանգվածային լրատվական միջոցներով:

4. Բաց մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերը, դրանց ներկայացման և ընդունման ընթացակարգը

4.1. Բաց մրցույթին մասնակցելու համար պահանջվում են հետևյալ փաստաթղթերի փաթեթները (փաստաթղթերը՝ բնօրինակներով).

ա) դիմում համալսարանի հոգաբարձուների խորհրդին (Հավելված 2),

բ) ՀՀ քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի լուսապատճեն,

գ) երկու լուսանկար 3x4 չափի,

դ) ինքնակենսագրություն,

ե) բարձրագույն կրթության դիպլոմի լուսապատճեն, գիտական աստիճանը հավաստող վկայականի լուսապատճեն և առնվազն 5 (հինգ) տարվա ակադեմիական և գիտական գործունեության ստաժը հավաստող փաստաթղթեր,

զ) աշխատանքային գրքույկի լուսապատճեն կամ տեղեկանք աշխատանքի վայրից,

է) հավակնորդի գործունեության ծրագիր՝ ստորագրված փակ փաթեթով, որը բացվում է հայտերի ընդունման վերջնաժամկետից հետո (մրցույթի անցկացման օրը հավակնորդը պետք է ապահովի գործունեության ծրագրի սահիկաշարի էլեկտրոնային տարբերակի առկայությունը):

4.2. Պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց՝ հավակնորդը, որպես պարտադիր պայման պետք է տրամադրի անձնական էլեկտրոնային փոստի հասցե և

հեռախոսահամար, անհրաժեշտության դեպքում պատշաճ ձևաչափով ծանուցումներ ստանալու համար:

4.3.Բաց մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերի ընդունումն ավարտվում է բաց մրցույթի անցկացման օրվանից 10 (տաս) օր առաջ:

4.4.Հավակնորդների՝ սույն կարգով պահանջվող փաստաթղթերն ընդունելու նպատակով համալսարանում բացվում է փաստաթղթերի ընդունման գրանցամատյան՝ էջերի համարակալմամբ, կարված և կնքված:

4.5.Գրանցամատյանի վարման և փաստաթղթերի ընդունման պատասխանատու է համարվում հոգաբարձուների խորհրդի քարտուղարը կամ հոգաբարձուների խորհրդի նախագահի կողմից լիազորված այլ անձ (այսուհետ՝ պատասխանատու):

4.6.Գրանցամատյանի լրացված էջը ստորագրվում և փակվում է յուրաքանչյուր օրվա ավարտին:

4.7.Հավակնորդի փաստաթղթերը ընդունելիս փաստաթղթերի ընդունման պատասխանատուն պարտավոր է ստուգել փաստաթղթերի համապատասխանությունը սույն կարգի 4.1 կետում ներկայացված պահանջներին: Փաստաթղթերի թերի լինելու դեպքում հավակնորդը տեղեկացվում է այդ մասին նույն պահին, իսկ դրա անհնարինության դեպքում՝ 1 (մեկ) օրվա ընթացքում, էլեկտրոնային փոստով և հեռախոսազանգով: Թերությունները կարող են վերացվել փաստաթղթերի ընդունման համար հայտարարությունում սահմանված ժամկետի ընթացքում:

4.8.Հավակնորդի ներկայացրած փաստաթղթերի փաթեթը անձնական գործերի ընդունման պատասխանատուն համարակալում է և յուրաքանչյուր էջի հետնամասում ստորագրում:

4.9.Եթե գրանցամատյանի վարման պատասխանատու է համարվում (հոգաբարձուների խորհրդի քարտուղարի փոխարեն) հոգաբարձուների խորհրդի նախագահի կողմից լիազորված այլ անձ, ապա համալսարանի ռեկտորի թափուր պաշտոնի բաց մրցույթին մասնակցելու համար հավաքագրված փաստաթղթերի փաթեթները (ներառյալ գրանցամատյանը), սույն կարգի 4.3 կետում նշված ժամկետը լրանալուց հետո՝ 1 (մեկ) օրվա ընթացքում, առձեռն հանձնում է համալսարանի հոգաբարձուների խորհրդի քարտուղարին:

4.10. Սույն կարգի 4.9 կետում նշված գործընթացը ավարտելուց հետո կազմվում է հանձման-ընդունման արձանագրություն (երկու օրինակից), որը ստորագրվում է

համալսարանի հոգաբարձուների խորհրդի քարտուղարի և անձնական գործերի ընդունման պատասխանատուի կողմից (Հավելված 3):

4.11. Հավակնորդի ներկայացրած փաստաթղթերի փաթեթը չի ընդունվում, եթե խախտվել է համալսարանի ռեկտորի թափուր պաշտոնի համար բաց մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունով սահմանված ժամկետը:

4.12. Հիմք ընդունելով հավակնորդների ներկայացրած փաստաթղթերը, համալսարանի հոգաբարձուների խորհրդի քարտուղարը այբբենական կարգով կազմում է հավակնորդների ցուցակը, որում նշվում են հավակնորդների անձնական տվյալները:

4.13. Համալսարանի հոգաբարձուների խորհրդի քարտուղարը բաց մրցույթին մասնակցող հավակնորդների ցուցակը և վերջիններիս ներկայացրած փաստաթղթերը սկանավորում և էլեկտրոնային փոստի միջոցով (հայտարարությունում նշված փաստաթղթերի ներկայացման ժամկետն ավարտելուց հետո 2 (երկու) օրվա ընթացքում) ուղարկում է համալսարանի հոգաբարձուների խորհրդի անդամների անձնական էլեկտրոնային փոստի հասցեներին՝ փաստաթղթերին ծանոթանալու համար:

5. Մրցույթի անցկացման ընթացակարգը

5.1. Համալսարանի ռեկտորի թափուր պաշտոնի համար բաց մրցույթը հոգաբարձուների խորհուրդը գումարում է հրապարակված հայտարարությունում նշված օրը:

5.2. Համալսարանի հոգաբարձուների խորհրդի գումարած նիստը համարվում է իրավազոր՝ հոգաբարձուների խորհրդի անդամների առնվազն 2/3-ի (երկու երրորդ) մասնակցության դեպքում:

5.3. Հոգաբարձուների խորհրդի նիստը բացում է հոգաբարձուների խորհրդի նախագահը և քննարկման է ներկայացնում նիստի օրակարգի նախագիծը: Օրակարգի նախագիծը և հաստատման առաջարկվող բոլոր հարցերը քննարկվում և հաստատվում են նիստին ներկա հոգաբարձուների խորհրդի անդամների քվեարկությամբ՝ ձայների պարզ մեծամասնությամբ:

5.4. Նիստի օրակարգը հետևյալն է.

ա) հավակնորդների՝ սույն կանոնակարգով նախատեսված պահանջներին համապատասխանության հարցի որոշում,

բ) թեկնածուների ցանկի հաստատում,

գ) թեկնածուների կողմից գործունեության ծրագրերի ներկայացում,

դ) խորհրդի անդամների կողմից հարցերի ուղղում թեկնածուներին,

ե) քննարկումներ և խորհրդի անդամների ելույթներ,

զ) հաշվիչ հանձնաժողովի ձևավորում,

է) ռեկտոր ընտրելու նպատակով գաղտնի քվեարկության իրականացում,

ը) ռեկտորի ընտրության արդյունքների մասին որոշման կայացում:

5.5.Հոգաբարձուների խորհրդի նիստի օրակարգի հաստատումից առաջ, խորհրդի անդամների առաջարկությամբ օրակարգում կարող են ավելացվել նաև այլ հարցեր:

5.6. Նիստի օրակարգի հաստատումից հետո, հոգաբարձուների խորհրդի նախագահը պարզաբանում է մրցույթի անցկացման ընթացակարգը:

5.7.Հոգաբարձուների խորհրդի նիստին ռեկտորի պաշտոնի հավակնորդի ներկայությունը պարտադիր է, սակայն նրա բացակայությունը հիմք չէ նրա թեկնածությունը քննարկումից կամ քվեարկությունից հանելու համար՝ բացառությամբ գրավոր ինքնաբացարկ հայտնելու դեպքերի:

5.8. **Օրակարգի առաջին հարց.** խորհրդի քարտուղարը այբբենական կարգով զեկուցում է հավակնորդների՝ սույն կարգի պահանջներին բավարարելու հարցը: Այնուհետև զեկուցողը պատասխանում է առաջացած հարցերին: Խորհրդի ցանկացած անդամ կարող է առաջարկ ներկայացնել հավակնորդին թեկնածուների ցուցակից հանելու վերաբերյալ՝ հիմնավորելով, թե սույն կարգի որ պահանջներն են խախտված: Հավակնորդին ցուցակից հանելու առաջարկը հոգաբարձուների խորհրդի նախագահի կողմից դրվում է քվեարկության: Հավակնորդը հանվում է ցուցակից, եթե առաջարկին կողմ է քվեարկել նիստին ներկա անդամների առնվազն 2/3-ը (երկու երրորդ):

5.9. **Օրակարգի երկրորդ հարց.** հոգաբարձուների խորհրդի նախագահի կողմից դրվում է քվեարկության թեկնածուների ցուցակը հաստատելու առաջարկը:

5.10. **Օրակարգի երրորդ հարց.** հոգաբարձուների խորհրդի նախագահը առաջնորդվում է սույն կարգի 5.12 կետով, ըստ ազգանունների այբբենական կարգի, ձայնը տալիս է թեկնածուներին՝ գործունեության ծրագրերի ներկայացման համար:

5.11. **Օրակարգի չորրորդ հարց.** յուրաքանչյուր թեկնածուի ելույթից հետո խորհրդի նախագահը հայտարարում է հարցերի հերթագրում, որից հետո խորհրդի հերթագրված անդամները, ըստ հերթագրման հերթականության, ստանում են թեկնածուին հարց տալու

հնարավորություն: Թեկնածուին տրվող հարցերը կարող են վերաբերվել միայն նրա կողմից ներկայացված փաստաթղթերին և ծրագրային ելույթին:

5.12. Յուրաքանչյուր թեկնածուի ներկայացման և քննարկման համար որպես կանոն սահմանվում է հետևյալ աշխատակարգը՝

ա) թեկնածուին ներկայացման և խոսք տալու համար մինչև 3 րոպե,

բ) թեկնածուի կողմից գործունեության ծրագիրը ներկայացնելու համար մինչև 20 րոպե,

գ) յուրաքանչյուր հարցի համար մինչև 2 րոպե,

դ) յուրաքանչյուր պատասխանի համար մինչև 5 րոպե,

ե) յուրաքանչյուր ելույթի համար մինչև 3 րոպե:

5.13. **Օրակարգի հինգերորդ հարց.** բոլոր թեկնածուներին ուղղված հարցերի և նրանց պատասխանների ավարտից հետո սկսվում է քննարկում: Խորհրդի անդամների ելույթները կարող են դադարեցվել խորհրդի որոշմամբ: Ելույթ ունեցող խորհրդի անդամներին հարցեր չեն տրվում:

5.14. Քննարկման ավարտից հետո թեկնածուներին կարող են տրվել լրացուցիչ ելույթի հնարավորություն:

5.15. Քննարկումներից հետո հոգաբարձուների խորհրդի նախագահը, ըստ ազգանունների այբբենական կարգի, հրապարակում է թեկնածուների ազգանուն-անունները: Եթե վերջիններս իրենց անունը հրապարակելու պահին ինքնաբացարկ չեն հայտնում, ապա նրանց թեկնածությունը ներառվում է քվեաթերթիկում:

5.16. Քննարկումն ավարտվում է խորհրդի նախագահի եզրափակիչ ելույթով:

5.17. **Օրակարգի վեցերորդ հարց.** գաղտնի քվեարկություն կազմակերպելու, ձայները հաշվելու համար հոգաբարձուների խորհրդի անդամներից ընտրվում է հաշվիչ հանձնաժողով՝ առնվազն 3 անձից բաղկացած կազմով:

5.18. Հաշվիչ հանձնաժողովը՝

ա) իր կազմից ընտրում է նախագահ,

բ) կազմակերպում և անցկացնում է քվեարկությունը,

գ) կազմում է համալսարանի ռեկտորի ընտրության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը (երկու օրինակից),

դ) հրապարակում է համալսարանի ռեկտորի ընտրության քվեարկության արդյունքները:

5.19. Հաշվիչ հանձնաժողովի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ՝ ձայների պարզ մեծամասնությամբ: Հաշվիչ հանձնաժողովի որոշումներն ու արձանագրությունները ստորագրում են հաշվիչ հանձնաժողովի նախագահը և բոլոր անդամները:

5.20. Գաղտնի քվեարկության համար պատրաստվում են քվեաթերթիկներ:

5.21. Քվեաթերթիկում նշվում է լրացման կարգը, քվեաթերթիկի ձախ կողմում թեկնածուների հերթական համարում այբբենական կարգով նշվում է ազգանունը, անունը, հայրանունը, իսկ քվեաթերթիկի աջ կողմում յուրաքանչյուր թեկնածուի ազգանվան դիմաց նշվում է «կողմ եմ» բառը և տեղադրվում է առանց նշումի վանդակ: Քվեաթերթիկի ձևը ներկայացված է սույն կարգի Հավելված 5-ում: Մեկ հավակնորդի առկայության դեպքում քվեաթերթիկում նշվում են «կողմ եմ» և «դեմ եմ» բառերը, դրանց դիմաց տեղադրվում է առանց նշումի վանդակ: Քվեաթերթիկի ձևը ներկայացված է սույն կարգի Հավելված 4-ում:

5.22. Հոգաբարձուների խորհրդի քարտուղարը թեկնածուների գաղտնի քվեարկության քվեաթերթիկները, քվեաթերթիկների գրանցման ցուցակները, խորհրդի անդամների ցուցակը և քվեարկության արդյունքների գրանցման արձանագրությունների ձևաթուղթը (Հավելված 6 կամ Հավելված 7) հանձնում է հաշվիչ հանձնաժողովի նախագահին:

5.23. Հաշվիչ հանձնաժողովը կազմակերպում է քվեարկությունը՝ ապահովում է քվեարկության համար անհրաժեշտ պայմաններ, ընտրողների (հոգաբարձուների խորհրդի անդամների ընտրության իրավունք ունեցող ցուցակային կազմ) ազատ ընտրական իրավունքի իրականացումը և պաշտպանությունը:

5.24. Քվեաթերթիկների գրանցման ցուցակները վարելու, քվեաթերթիկները բաժանելու և քվեատուփը հսկելու համար, հաշվիչ հանձնաժողովի նախագահը կատարում է աշխատանքի բաժանում՝ հանձնաժողովի անդամների միջև:

5.25. Հոգաբարձուների խորհրդի որոշմամբ նիստերը կարող են ընդմիջվել:

5.26. Հոգաբարձուների խորհրդի նիստը շարունակվում է մինչև քվեարկության ավարտը և ընտրության արդյունքների մասին որոշման կայացումը:

6. Քվեարկության անկացման ընթացակարգը

6.1. Հոգաբարձուների խորհրդի նախագահը ներկայացնում է գաղտնի քվեարկության ընթացակարգը:

6.2. Գաղտնի քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեն համալսարանի հոգաբարձուների խորհրդի նիստին մասնակցող բոլոր անդամները (բացառությամբ սույն կարգի 6.7 կետում նշված դեպքերի)՝ հավասար իրավունքով:

6.3. Գաղտնի քվեարկությունը կազմակերպվում է քվեարկության համար առանձնացված սենյակում կամ առանձին խցիկում:

6.4. Բոլոր քվեաթերթիկները ստորագրվում են հաշվիչ հանձնաժողովի բոլոր անդամների կողմից՝ քվեաթերթիկի հետևի մասում:

6.5. Քվեաթերթիկները քվեարկողներին հանձնում է հաշվիչ հանձնաժողովի անդամը: Քվեաթերթիկ ստացողը ստորագրում է ցուցակում՝ իր ազգանվան-անվան դիմաց: Քվեաթերթիկները բաժանելուց հետո չհանձնված քվեաթերթիկները տեղադրվում է առանձին ծրարի մեջ և վավերացվում հաշվիչ հանձնաժողովի նախագահի և անդամների ստորագրությամբ:

6.6. Հոգաբարձուների խորհրդի անդամը քվեարկության ժամանակ ունի միայն մեկ ձայնի իրավունք: Քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անդամի չի թույլատրվում:

6.7. Եթե հոգաբարձուների խորհրդի նիստում քննարկվում է հոգաբարձուների խորհրդի որևէ անդամի (որպես թեկնածու) կամ նրա հետ փոխկապակցված անձի (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր և քույր) վերաբերյալ հարց, ապա հոգաբարձուների խորհրդի տվյալ անդամը քվեարկությանը չի մասնակցում:

6.8. Քվեաթերթիկը ստանալուց հետո խորհրդի անդամն անցնում է քվեարկության սենյակ կամ քվեարկության խցիկ՝ ինքնուրույն, գաղտնի լրացնում է քվեաթերթիկը: Քվեարկողը քվեաթերթիկի իր նախընտրած թեկնածուի օգտին քվեարկելու դեպքում, այդ թեկնածուի ազգանվան դիմաց «կողմ եմ» բառի դիմաց առկա առանց նշումի վանդակում նշում է V-աձև նշանը: Քվեաթերթիկում այլ նշումներ չեն կատարվում:

6.9. Մեկ թեկնածուի դեպքում կողմ քվեարկելիս քվեարկողը «կողմ եմ» բառի դիմաց առկա առանց նշումի վանդակում նշում է V-աձև նշանը, իսկ դեմ քվեարկելիս V-աձև նշանը նշում է «դեմ եմ» բառի դիմաց՝ առկա առանց նշումի վանդակում:

6.10. Քվեարկողը քվեաթերթիկում քվեարկության մասին նշում կատարելուց հետո՝ քվեարկության սենյակում կամ քվեարկության խցիկում ծալում է քվեաթերթիկը և գցում նախօրոք ստուգված և կնքված քվեատուփի մեջ:

6.11. Քվեարկության ավարտից հետո հաշվիչ հանձնաժողովի նախագահը, հանձնաժողովի անդամների ներկայությամբ առանձին սենյակում բացում է քվեատուփը, քվեատուփից հանում մեկական քվեաթերթիկ, հայտարարում և գրանցում է քվեարկության արդյունքը, փոխանցում հանձնաժողովի անդամներին՝ տեսակավորելու համար: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ մինչև քվեատուփից հաջորդ քվեաթերթիկը հանելը կարող է պահանջել քվեարկության դնել քվեաթերթիկի անվավեր լինելու հարցը:

6.12. Քվեաթերթիկը համարվում է անվավեր, եթե չի համապատասխանում սույն կարգի 6.8-6.9 կետերի պահանջներին կամ պարունակում է ընտրողի ինքնությունը բացահայտող նշում կամ առկա են չնախատեսված նշումներ, ընդգծումներ, գրառումներ: Քվեաթերթիկի անվավերության վերաբերյալ հաշվիչ հանձնաժողովի որոշումը ընդունվում է հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

6.13. Քվեատուփում առկա բոլոր քվեաթերթիկները տեսակավորելուց հետո հաշվիչ հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի անդամների ներկայությամբ մեկ առ մեկ հաշվարկում է անվավեր համարված քվեաթերթիկների, ինչպես նաև յուրաքանչյուր թեկնածուին կողմ կամ դեմ քվեարկված քվեաթերթիկների թիվը, ամփոփում է քվեարկության արդյունքները և դրան համապատասխան կազմում արձանագրություն: Արձանագրության օրինակելի ձևերը սահմանված են սույն կարգի Հավելված 6-ում և Հավելված 7-ում:

6.14. Արձանագրությունը կազմելուց հետո յուրաքանչյուր թեկնածուի համար հաշվիչ հանձնաժողովի նախագահը ծրարում է քվեարկությանը մասնակցած քվեաթերթիկները, վավերացնում իր և հանձնաժողովի անդամների ստորագրությամբ և կցում արձանագրությանը:

6.15. Արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի բոլոր անդամները: Մեկից ավելի թեկնածուների դեպքում արձանագրության մեջ թեկնածուների ցուցակը տրվում է ըստ հավաքած «կողմ» ձայների քանակի նվազման հաջորդականության:

6.16. Հաշվիչ հանձնաժողովի նախագահը հրապարակում է գաղտնի քվեարկության արդյունքները հոգաբարձուների խորհրդի նիստում՝ նշելով հոգաբարձուների խորհրդի նիստին ներկա և քվեարկությանը մասնակցած անդամների թիվը, բաժանված, չբաժանված և քվեատուփում հայտնաբերված քվեաթերթիկների քանակը, շեշտում կողմ, դեմ, անվավեր արդյունքներն ու առաջարկում հաստատել հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը:

6.17. Քվեարկության ընթացքի կամ քվեաթերթիկների հաշվարկի ընթացքի վերաբերյալ հաշվիչ հանձնաժողովի՝ առարկություն ունեցող անդամը, քվեարկության արդյունքները ներկայացնելուց հետո կարող է հոգաբարձուների խորհրդին ներկայացնել նախօրոք գրավոր շարադրած հատուկ կարծիք: Հոգաբարձուների խորհուրդը բաց քվեարկությամբ իր վերաբերմունքն է արտահայտում ներկայացված բոլոր հատուկ կարծիքների վերաբերյալ:

6.18. Հոգաբարձուների խորհուրդը բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ հաստատում է հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը և քվեարկության արդյունքները:

6.19. Քվեարկության արդյունքների հիման վրա հոգաբարձուների խորհուրդն ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

ա) մրցույթը կայացած համարելու և համալսարանի ռեկտոր ընտրվելու մասին,

բ) քվեարկության երկրորդ փուլ անցկացնելու մասին,

գ) մրցույթը անվավեր ճանաչելու և ռեկտոր չընտրվելու մասին,

դ) մրցույթը չկայացած ճանաչելու և ռեկտոր չընտրվելու մասին:

6.20. Համալսարանի ռեկտորի պաշտոնում ընտրված է համարվում այն թեկնածուն, ով հավաքել է հոգաբարձուների խորհրդի ցուցակային կազմի 50 (հիսուն) տոկոսից ավելի ձայներ:

6.21. Առաջին փուլի քվեարկության արդյունքում ընտրությունը համարվում է չկայացած, իսկ ռեկտորը՝ չընտրված, եթե քվեարկված միակ թեկնածուն չի ստացել ընտրվելու համար անհրաժեշտ ձայներ, կամ քվեարկության են դրվել երկու կամ ավելի թեկնածություններ, և նրանք միասին չեն հավաքել հոգաբարձուների խորհրդի ցուցակային կազմի 50 (հիսուն) տոկոսից ավելի ձայներ:

6.22. Քվեարկության երկրորդ փուլն անցկացվում է, եթե քվեարկության են դրվել երկու կամ ավելի թեկնածություններ, և նրանցից ոչ մեկը չի ստացել անհրաժեշտ թվով ձայներ: Այս դեպքում երկրորդ փուլ են անցնում առավել ձայներ հավաքած երկու թեկնածուները, եթե նրանք միասին հավաքել են հոգաբարձուների խորհրդի ցուցակային կազմի 50 (հիսուն) տոկոսից ավելի ձայներ, իսկ երկրորդ թեկնածուի ձայներին հավասար թվով ձայներ հավաքած այլ թեկնածուների առկայության դեպքում՝ նաև այդ թեկնածուները: Եթե առավել ձայներ հավաքած երկու թեկնածուները միասին չեն հավաքել հոգաբարձուների խորհրդի ցուցակային կազմի 50 (հիսուն) տոկոսից ավելի ձայներ, ապա երկրորդ փուլ են անցնում առավել ձայներ հավաքած երեք, իսկ երրորդ թեկնածուին հավասար թվով ձայներ հավաքած այլ թեկնածուների առկայության դեպքում՝ նաև այդ թեկնածուները:

6.23. Երկրորդ փուլի քվեարկության արդյունքների հիման վրա հոգաբարձուների խորհուրդն ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

ա) մրցույթը կայացած համարելու և համալսարանի ռեկտոր ընտրվելու մասին,

բ) քվեարկության երրորդ փուլ անցկացնելու մասին,

գ) մրցույթը չկայացած ճանաչելու և ռեկտոր չընտրվելու մասին:

6.24. Համալսարանի ռեկտորի պաշտոնում ընտրված է համարվում այն թեկնածուն, ով երկրորդ փուլում հավաքել է հոգաբարձուների խորհրդի ցուցակային կազմի 50 (հիսուն) տոկոսից ավելի ձայներ:

6.25. Քվեարկության երրորդ փուլ անցկացվում է, եթե քվեարկության երկրորդ փուլի արդյունքում թեկնածուներից ոչ մեկը չի ստացել անհրաժեշտ թվով ձայներ: Երրորդ փուլ են անցնում առավել ձայներ հավաքած երկու թեկնածուները, իսկ երկրորդ թեկնածուի ձայներին հավասար թվով ձայներ հավաքած այլ թեկնածուների առկայության դեպքում՝ նաև այդ թեկնածուները:

6.26. Երրորդ փուլի քվեարկության արդյունքների հիման վրա հոգաբարձուների խորհուրդն ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

ա) մրցույթը կայացած համարելու և համալսարանի ռեկտոր ընտրվելու մասին,

բ) մրցույթը չկայացած ճանաչելու և ռեկտոր չընտրվելու մասին:

6.27. Երրորդ փուլի քվեարկության արդյունքում մրցույթը համարվում է չկայացած, իսկ ռեկտորը՝ համարվում է չընտրված, եթե որևէ թեկնածու չի ստացել ընտրվելու համար անհրաժեշտ թվով ձայներ:

6.28. Համալսարանի ռեկտորի թափուր պաշտոնի համար անցկացված բաց մրցույթի արդյունքը ձևակերպվում է հոգաբարձուների խորհրդի որոշմամբ, որը ստորագրում է հոգաբարձուների խորհրդի նախագահը: Որոշման մեկ օրինակը հոգաբարձուների խորհրդի նախագահը երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարին:

6.29. Համալսարանի ռեկտորի թափուր պաշտոնի համար անցկացվող բաց մրցույթի ողջ գործընթացն արտացոլող բոլոր փաստաթղթերը նիստի արձանագրության հետ պահվում են համալսարանում:

6.30. Սույն կարգով սահմանված ընթացակարգերի խախտումները և բաց մրցույթի արդյունքները կարող են բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.31. Բաց մրցույթի անցկացման գործընթացը հոգաբարձուների խորհրդի որոշմամբ ճանաչվում է անվավեր, եթե ընթանում է ՀՀ օրենսդրության, համալսարանի կանոնադրության, սույն կարգի էական խախտումներով:

6.32. Եթե խախտումները տեղի են ունեցել մինչև համալսարանի ռեկտորի թափուր պաշտոնի համար գումարված հոգաբարձուների խորհրդի նիստը, ապա բաց մրցույթը անվավեր ճանաչելու դեպքում հոգաբարձուների խորհրդը հայտարարում է նոր մրցույթ:

6.33. Եթե խախտումները տեղի են ունեցել գումարված հոգաբարձուների խորհրդի նիստի ընթացքում կամ քվեարկության փուլում, ապա հոգաբարձուների խորհրդի որոշմանբ տվյալ գործընթացը ճանաչվում է անվավեր, շտկվում են թերությունները և հոգաբարձուների խորհուրդը հայտարարում է նոր քվեարկություն:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Սույն կարգը հաստատվում, փոփոխվում կամ լրացվում է համալսարանի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ:

7.2. Սույն կարգն ուժի մեջ է մտնում համալսարանի հոգաբարձուների խորհրդում հաստատվելուց անմիջապես հետո:

7.3. Հավելվածները համարվում են սույն կարգի անբաժանելի մասը և հոգաբարձուների խորհրդում հաստատվում են սույն կարգի հետ միասին:

7.4. Այն հարցերը, որոնք չեն կարգավորվում սույն կարգով, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով և համալսարանի կանոնադրությամբ:

Հավելված 1

«___» «_____» 202

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ համալսարանի ռեկտորի թափուր պաշտոնի համար

«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) ռեկտորի թափուր պաշտոնի մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացիները, ովքեր ունեն՝

ա) առնվազն հինգ տարվա ակադեմիական և գիտական գործունեության ստաժ,

բ) գիտական աստիճան:

Համալսարանի ռեկտորի թափուր պաշտոնի բաց մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

ա) դիմում համալսարանի հոգաբարձուների խորհրդին (Հավելված 2),

բ) ՀՀ քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի լուսապատճեն,

գ) երկու լուսանկար 3x4 չափի,

դ) ինքնակենսագրություն,

ե) բարձրագույն կրթության դիպլոմի լուսապատճեն, գիտական աստիճանը հավաստող վկայականի լուսապատճեն և առնվազն 5 (հինգ) տարվա ակադեմիական և գիտական գործունեության ստաժը հավաստող փաստաթղթեր,

զ) աշխատանքային գրքույկի լուսապատճեն կամ տեղեկանք աշխատանքի վայրից,

է) հավակնորդի գործունեության ծրագիր՝ ստորագրված փակ փաթեթով, որը բացվում է հայտերի ընդունման վերջնաժամկետից հետո (մրցույթի անցկացման օրը հավակնորդը պետք է ապահովի գործունեության ծրագրի սահիկաշարի էլեկտրոնային տարբերակի առկայությունը):

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերի փաթեթները (փաստաթղթերը՝ բնօրինակներով) ներկայացնել 202 թվականի «_____» «___»-ից մինչև 202 թվականի «_____» «___»-ը ներառյալ, ժամը՝ 10-ից 13-ը (աշխատանքային օրերին),

ք. Երևան Տերյան 105, 2-րդ մասնաշենք (ձախ մուտք), № _____ սենյակ, հեռախոս՝ _____:

Մրցույթը տեղի կունենա 202 թվականի «_____» «___»-ին ժամը ___-ին, Համալսարանի № _____ սենյակում:

Հավելված 2
(օրինակելի ձև)

«ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ

ԴԻՄՈՒՄ

«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի հրապարակած հայտարարությունից տեղեկացվել եմ, որ հայտարարվում է բաց մրցույթ՝ «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի ռեկտորի թափուր պաշտոնի համար:

Դիմում եմ «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին, ռեկտորի թափուր պաշտոնի բաց մրցույթին մասնակցելու նպատակով, ինձ որպես հավակնորդ գրանցելու համար:

Կից ներկայացնում եմ պահանջվող փաստաթղթերը և տեղեկատվությունը.

1. _____
2. _____
3. _____
4. _____

Դիմող՝ Անուն Ազգանուն

«___» «_____» 202 թվական

Հավելված 3

Փաստաթղթերի ընդունման պատասխանատու	Համալսարանի հոգաբարձուների խորհրդի քարտուղար
_____ ազգանուն, անուն	_____ ազգանուն, անուն

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի ռեկտորի թափուր պաշտոնի մրցույթին մասնակցելու հայտ ներկայացրաց հավակնորդների հավաքագրված փաստաթղթերի հանձման-ընդունման

Փաստաթղթերի ընդունման պատասխանատուն և «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի քարտուղարը՝ առաջնորդվելով «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի ռեկտորի ընտրության կարգով, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Համալսարանի ռեկտորի թափուր պաշտոնի բաց մրցույթին մասնակցելու համար հավաքագրված փաստաթղթերի փաթեթները (ցանկը կցվում է) և գրանցամատյանը, առձեռն հանձնում է Համալսարանի հոգաբարձուների խորհրդի քարտուղարին:

Փաստաթղթերը հանձնեց՝	Փաստաթղթերը ընդունեց՝
_____ ստորագրություն	_____ ստորագրություն

«____» «_____» 202 թ.

Հավելված 4

<u>Քվեաթերթ</u>

«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի ռեկտորի ընտրության

Կողմ քվեարկելու դեպքում թեկնածուի ազգանվան դիմացի «կողմ եմ» բառի դիմաց առկա վանդակում նշվում է V-աձև նշան, իսկ դեմ քվեարկելու դեպքում նույն V-աձև նշանը նշվում է «դեմ եմ» բառի դիմաց առկա վանդակում: Այդ վանդակներում և քվեաթերթիկում այլ նշումներ չեն կատարվում:

հ/հ	Թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը	Քվեարկություն	
		Կողմ եմ ☐	Դեմ եմ ☐

Հավելված 5

<u>Քվեաթերթ</u>

«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի ռեկտորի ընտրության

Կողմ քվեարկելու դեպքում քվեարկողը նախընտրած թեկնածուի ազգանվան դիմացի «կողմ եմ» բառի դիմաց առկա վանդակում նշում է V-աձև նշան: Քվեաթերթիկում այլ նշումներ չեն կատարվում:

հ/հ	Թեկնածուի ազգանունը, անունը, հայրանունը	Քվեարկություն
		Կողմ եմ ☐
		Կողմ եմ ☐
		Կողմ եմ ☐

Հավելված 6

Արձանագրություն №

«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի ռեկտորի ընտրության հաշվիչ հանձնաժողովը հետևյալ կազմով՝

1.
2.
3.

Ամփոփելով 202 թվականի «_____» «____»-ին համալսարանի ռեկտորի թեկնածուի գաղտնի քվեարկության արդյունքները արձանագրեց.

քվեարկությունը տեղի է ունեցել 202 թվականի «_____» «____»-ին, ժամը __-ից մինչև __-ը: Ընտրողների ցուցակում ընդգրկված են _____ ընտրող: Հանձնաժողովը, բացելով գաղտնի քվեարկության քվեատուփը, արձանագրեց.

1. գաղտնի քվեարկությանը մասնակցելու համար քվեաթերթիկներ են ստացել _____ ընտրող,
2. քվեարկությանը մասնակցել են _____ ընտրող,
3. քվեատուփում հայտնաբերվել է _____ քվեաթերթիկ,
4. անվավեր են ճանաչվել _____ քվեաթերթիկ,
5. ըստ քվեարկության արդյունքների՝ թեկնածուն ստացել է հետևյալ ձայները՝

1) ..... _____կողմ

2) ..... _____ դեմ

Այսպիսով՝ քվեարկության արդյունքում թեկնածուի օգտին քվեարկել է _____ ընտրող:

Քվեարկության արդյունքներով_____-ը

ազգանուն, անուն

ընտրված է «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի ռեկտոր:

Կամ՝

Քվեարկության արդյունքներով «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի ռեկտորի ընտրությունը համարվում է չկայացած:

Հաշվիչ հանձնաժողովի նախագահ՝ _____

անդամներ՝ _____

_____

Հավելված 7

Արձանագրություն №

«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի ռեկտորի ընտրության հաշվիչ հանձնաժողովը հետևյալ կազմով՝

1.
2.
3.

Ամփոփելով 202 թվականի «_____» «____»-ին համալսարանի ռեկտորի թեկնածուի գաղտնի քվեարկության արդյունքները արձանագրեց.

քվեարկությունը տեղի է ունեցել 202 թվականի «_____» «____»-ին, ժամը __-ից մինչև __-ը: Ընտրողների ցուցակում ընդգրկված են _____ ընտրող: Հանձնաժողովը, բացելով գաղտնի քվեարկության քվեատուփը, արձանագրեց.

4. գաղտնի քվեարկությանը մասնակցելու համար քվեաթերթիկներ են ստացել _____ ընտրող,
5. քվեարկությանը մասնակցել են _....._ ընտրող,
6. քվեատուփում հայտնաբերվել է ....._ քվեաթերթիկ,
7. անվավեր են ճանաչվել _____ քվեաթերթիկ,
8. ըստ քվեարկության արդյունքների՝ թեկնածուներն ստացել են հետևյալ ձայները՝
   1. ..... _____կողմ
   2. ..... _____կողմ
   3. ..... _____կողմ

Այսպիսով՝ քվեարկության արդյունքում առավել քանակությամբ կողմ ձայներ է ստացել _____.

կամ՝ հավասար ձայներ հավաքած հետևյալ թեկնածուների միջև անցկացվում է ընտրության երկրորդ (կամ երրորդ) փուլ

1. ..... _____կողմ
2. ..... _____կողմ
3. ..... _____կողմ

Գաղտնի քվեարկության արդյունքներով _____ -ը
ազգանուն, անուն

ընտրված է «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի ռեկտոր:

Կամ՝

Քվեարկության արդյունքներով «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի ռեկտոր ընտրությունը համարվում է չկայացած:

Հաշվիչ հանձնաժողովի նախագահ՝ _____

անդամներ՝ _____

_____